

Երջանիկ մահը



Exported from Wikisource on 12 հուլիսի, 2023 թ.

Երջանիկ մահը

[Գրիգոր](#)
[Զոհրապ](#)

Երջանիկ մահը

Ա.

Տօթթօն Վահանեան սովորական բժիշկ մը չէ. մարմնի հիւանդութիւններուն չափ ու, թերեւս անոնցմէ աւելի, հոգիի ցաւերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկն է անիկա: Իր ընթրնումին ու դատողութեան չափ՝ իր ներողութեան սահմանը ընդարձակ է: Գիտութեան ֆօրմիւլներուն, կամ իր արհեստին մեքենական կիրառումին մէջ տափակցած ու չքացած միտք մը չէ:

Իր հմտութեան մեծութիւնը՝ չոր ու ցամաք ապառաժի գանգուածին չի նմանիր բնաւ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երեսոյթը ունի:

Վաթսունի մօտ, մագը մօրուքը ճերմկած, տկարակազմ, բայց գուարթախտի մէկն է Տօթթօնը:

Մահուան դէմ՝ իր քառասուն տարուան բժիշկի մղած պայքարովը, մտերմութիւն մը հաստատած է կարծես անոր հետ. անոր ամէն դաւերը ու խաղերը գիտէ. անոր զարհուրելի, երբեմն յանկարծահաս ու երբեմն յամեցող հարուածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է:

Իր խօսակցութիւնը օգտաւէտ դասերով, ուղիղ դիտողութիւններով ու իմաստուն խորհրդածութիւններով կը վիստայ: Անձնական փորձառութենէն ու յիշատակներէն ընդելուզուած պատմութիւնները հետաքրքրութեամբ մտիկ կ'ըլլուին:

Գատրգիւղի իր տանը մէջ իրիկուն մը ժողվուեր էինք, եւ մարդոց համար ամենէն հետաքրքրական հարցունը մէջտեղ նետուեցաւ յանկարծ: Ո՞րն էր հազար

տեսակ մահերուն ամենէն քաղցրը, բժշկական ու հոգեբանական կրկին տեսակէտով:

Յայտնուած կարծիքներուն մէջ համաձայնութիւն չկար . առողջ ու կայտաւ աղջիկ մը, որ **Ռ-աֆայէլ** կարդացեր էր եւ դալուկ ու նիհար կազմուածքի մը կը տենչար, թոքախտի հիւծումն

է, ըսաւ, էն գեղեցիկ մահը . երիտասարդի մը կարծիքին նայելով՝ ռեվոլվէրի գնդակն էր ուղեղին մէջ . ուրիշ մը՝ ծովահեղձ ըլլալը ամենէն քիչ տանջանք տուող վախճան մը ըլլալուն վրայ պնդեց . քլորոֆորմը երկու կուսակից գտաւ:

Բնութեան ու գիտութեան հնարած բոլոր միջոցները գատ-գատ քննուեցան ու քննադատուեցան . ամէնքն ալ իրենց աղէկ ու գէշ կողմերը ունեին:

Տօթթօղը ինքը, մտիկ կ'ընէր ամենուս, առանց բառ մը արտասանելու . վէճը կ'երկարեր ու համաձայնութեան մը գալէ հեռու էինք:

— Ես,— ըսաւ Տօթթօղը, խոսքերնիս կտրելով, ամենէն քաղցր մահը տեսայ, բայց չեմ կրնար պնդել որ ամէն անգամ մարդս կրնայ գայն իր ձեռքին տակ ունենալ . մէկ հատիկ մահն էր ասիկա, գոր իմ տեսած հազարաւորներուս մէջէն, ոչ միայն ամենէն հեշտն էր կրնամ ըսել, այլ իրօք քաղցրն ու երջանիկն էր:

Պատմութիւն մը ունէր լեզուին ծայրը . խելօք կեցած տղոց պէս մտիկ ըրինք զինքը:

Բ.

Տասը տարի կայ անկէ ի վեր . Բարեկենդանի գիշեր մը իմ դրացիներէս մէկուն տանը մէջ երեկոյթ մը կար . տիկին... անունը պէտք չէ ձեզի, այնպէս չէ՞, քառասունը հազիւ թեւակոխեր էր, բայց երեսունը հինգ տարու չէր ցուցներ վրայէն . այն շատ հաւնուած ու շատ սիրուած կնիկներէն մէկն էր, որոնց սերունդը հետզհետէ պակսելու, անհետանալու վրայ է մեր մէջ . իր մասին պատմուած առասպելներու վրայ ամենէն առաջ եւ ամենէն շատ խնդացողը ինքն էր: Սուս պարկեշտութիւններու, կեղծատր կարմրութիւններու կիներ չէր այն կիներ . գլխէն մինչեւ ոտքը ամեն բան խիզախ ու համարձակ էր վրան:

— Աղվոր կուրծք մը չունեցողները միայն decollete-ին թշնամի են, - կ'ըսեր խնդալով, եւ յօժարակամ կը պարզէր իր լանջքին կոհակները քոռուէին բացուածքէն:

Էրիկը, ծերունի մը, հայր մը գրեթէ տարիքով, հօր մը թոյլտութիւնները, ազատութիւնները թողած էր անոր: Էն աղուոր երիտասարդները, Էն շնորհքով մարդիկը իր շուրջն էին,

թիթեռնիկներու պէս դառնալով, երբեմն էրելով մրկելով, իր ջերմ ու կիզիչ մթնոլորտին մէջ:

Բոլոր կիները չէին քաշեր գինքը, կը նախանձէին, կը շարախօսէին իր վրայ . անոր համարձակ վարմունքը իրենց պարտկուած մեղքերուն, իրենց շինծու ամօթխածութեանը դէմ պայծառ արեւի մը հալածիչ լոյսին կը նմանէր՝ խայնոտ ստվերներու վրայ սփռուած:

Ասոր հետ մէկտեղ, երբեք չէին պակսեր անոր տունէն, անոր երեկոյթներէն, ուր էն աղուոր, էն գուարթ, էն նրբամիտ ընկերութիւնը գտնելուն ապահով էին:

Ատեն ատեն կը կանչէին գիս այս տունէն, տիկնոջ համար որ մարելիքի պէս տագնապներ կ'ունենար երբեմն: Առջի քննութենէս՝ սրտի հիւանդութեան մը հաստատ նշանները գտեր էի վրան, բայց գինքը չխռովելու համար քաւականացեր էի ըսելով .

— Բան մը չեն ասոնք, պարզ շղային անհանգստութիւններ:

Գլխատր բանը քիչ մը հանդարտ կեանք վարելու պէտքն էր . այս եղաւ իմ պատուէրս ալ . բայց ո՞վ մտիկ կ'ըներ ինծի:

Օր մը նեղացայ:

— Տիկին,- ըսի,- պարապ տեղը երթալ գալէն չեն ախորժիր . քանի որ իմ պատուիրած բանս չէք ըներ, պէտք չկայ որ գիս կանչէք ուրիշ անգամ . ասելի հաճոյակատար բժիշկի մը դիմեցէք, խնդրեմ: Հիւանդս հասկցաւ, եւ որովհետեւ մտքի ու սրտի տէր կին մըն էր, իսկոյն ներում խնդրեց այնպիսի քաղցր ու անուշ ձայնով մը, որուն դէմ կենալու էն քարսիրտ մարդն անգամ կարող չէր:

— Ձեր աղէկութեան համար է իմ պահանջումս . չեն կրնար առողջութեան բոլոր կանոններուն հակառակ ձեր վարած կենցաղին ատերումները տեսնել եւ լուռ կենալ, չեն կրնար ձեզ շարգիլել այս կեանքը շարունակելէ:

— Օր մը ասելի՞ ապրելու համար, Տօթթօս,- պատասխանեց ինծի ժպտալով,- օր մը ասելի՞ տառապելու համար . եւ բռնելով ձեռքս, ստիպելով գիս որ քովը նստիմ, երբ ես մեկնելու կը պատրաստվեի արդէն, շարունակեց .

— Դուք, բժիշկներ, կեանքը երկարացնելու աշխատող մարդիկ, կիներուն՝ այս հէզ էակներուն կեանքը պահպանելու մի՛ աշխատիք, քանի որ չէք կրնար այդ կեանքը իր թարմութեան, իր գեղեցկութեան մէջ անայլայլ ու հաստատ պահել . ճերմակած թափած մազերու, փոթփոթած երեսի, թուլցած միսի մը ասելի կամ նուազ տետղութիւնը նշանակութիւն չունի . կիներ իր երիտասարդութեան, իր հրապոյրներուն մէջ կրնա՞ք

վար դնել, կեցնել: Չէ՞ք կրնար, թող տվեք ուրեմն որ երթայ հոսկէ . իր պաշտօնը, իր կոչումը աւարտած է ան . ի՛նչ, կը պահանջես ձայնը մարած երգիչէն՝ որ սրահին վրա՛յ կենայ, մինչեւ որ սուլեն, ծաղրեն ու նախատեն զինքը . կինը ծիծաղ մըն է, պէտք չէ որ լացի փոխուի:

Հիւանդութիւնը կը սաստկանար, հեղձումները կը յաճախէին ու միշտ խուլ կը մնար անհկա իմ խրատներուս, եւ իր զբօսանքի, հաճոյքի կեանքը անխափան կը շարունակէր: Տարօրինակ, բայց թերեւս ամենէն ուղիղ ըմբռնումն էր իրենը՝ աշխարհիս մէջ կնոջ մը դերին եւ կոչումին վրայ: Յոյսը եւ Ուրախութիւնն էր ինքը եւ անձնուրաց արիութեամբ մը կը բաշխէր իր կենդանութիւնը, իր շնորհը, իր հրապոյրը, երբոր ինքը պէտք ունէր աստոնց, Քօբէի մանիշակ ծախող աղջիկին պէս,

Elle mourait de l'hiver, en vendant le printemps.

Գ.

Երեկոյթը իր ամենէն ցնծայոյց վայրկեանին մէջն էր: Շատ մը աղուոր կիներ, շատ մը շնորհալից աղջիկներ, այնքան ալ երիտասարդ մարդիկ ու պատանիներ . լուռ ըղձանքներով ծանրացած մթնոլորտ մը, որուն մէջ՝ տանտիկինը իր հասակին ու արդուզարդին շքեղութեամբը ամենէն գմայլելին կը հանդիսանայ:

Քովես՝ պզտիկ ձայն մը . ասանկ երեկոյթներու սովորական չարախոսութիւնները, որոնց ամենէն թունաւորները տանտիրուհոյն դեմ կ'արձակուէին:

— Տեսէք, իր սիրած երիտասարդէն վայրկեան մը չի բաժնուիր . մարդ չի սեպեր աս կնիկը:

Երիտասարդը՝ տժգոյն ու նիհար մէկն էր, գոր կիները իրարու ձեռքէ կը խլէին: Իր վրդոված կեանքին կը պարտէր այս ձգողութիւնը: Ուրոյնութիւն մը ունէր անհկա, եւ իրեն յատուկ դրոշմ մը կար իրեն պատկանող ամէն բանի մէջ: Արհամարհոտ պզտիկ ժպիտ մը նուրբ ու սեւ պեխերուն ծայրը. կոպերը կտրած աչքեր, որոնք իր գիշերանոյ մարդու յոգնութիւնները կը պատմէին . վէս խրոխտութիւն մը, որ վաղաթարշամ երիտասարդութեանը վրայ ծաւալած ծանրութեան պէս բանի կը նմանէր, կարծես ուսումներու եւ հսկումներու մէջ խորասուզուող մարդու ծանրութիւնը:

Մտքի ու ճաշակի տէր մէկն էր: Իրաւագիտութիւն սորվելու համար Եւրոպա կեցած տարիներէն՝ միջակ վկայականով մը, բայց նրբացած իմացակնութեամբը վերադարձած էր հոս: Համալսարանին սրահներէն աւելի՝ գեղեցիկ կիներու քով,

միանգամայն՝ տաղանդաւոր մարդոց եւ լաւագոյն ընկերութեանց մէջ մտած ու ապրած էր, մսխելով, փճացնելով ունեցածը եւ չունեցածը: Հոս ոչ փաստաբան եղեր էր եւ ոչ դատաւոր . անկեղծութեամբ, քաջութեամբ խոստովանած էր իր ապիկարութիւնը:

Ամէն ինչ չափաւոր, գրեթէ մեղմ էր իր վրայ, իր ձայնը, իր շարժումները . բայց ատոր խորը կը տեսնայիր անձնավստահ մարդու, կամ՝ աւելի ճիշդը ըսելու համար՝ իր գերագանցութիւնը գիտցող մարդու մը անխռով հանդարտութիւնը:

Աղջիկներու ետեւեն չէր վագեր . երեխաներ անոնք՝ իր փորձ, գրեթէ հայրական աչքին: Ջիջում մը, ստորնացում մը պիտի ըլլար իրեն համար խռովել կոյսի մը մաքուր հոգին . այս կենցաղասէր մարդուն մէջ՝ ահա այս կերպ իր կեանքին հակասող ազնուութիւններ ալ կային: Իր ասպետական, կռիով, հարձակումով բերդ առնող մարդու համբաւին եւ սովորութեանցը հակառակ էր տեսլական սիրոյ մը հեռանկարովը աղջկան մը սրտէն ներս սպրդիլ . այս Ողիսեսի միջոցները իրեն չէին պատշաճեր:

Ջրուցուածին նայելով՝ տարիէ մը ի վեր տիկին-ի մտերիմն էր, ու ամէնքը, իրենց բոլոր չարախօսութեանց մէջ անգամ, այս երկութին միջեւ ճշմարիտ ներդաշնակութիւն մը գտեր էին որ երկութին ալ սովորական էակներ չըլլալէն առաջ կուգար անշուշտ:

Դ.

Հիմա կը պարէին . այրերը իրենց պահանջումներուն անհամբերութիւնը բերելով հոս ալ, կիները իրենց անձնամատոյց մեղկութիւնը . խօլական գիրկընդխառնումներու, վէտովտումներու անընդհատ շարք մըն էր այս ամէնը:

Վալսին՝ Տիկինն ալ եկաւ այն երիտասարդին հետ, որ իր խօսակիցը եղած էր գրեթէ շարունակ, եւ պարողներուն մէջ այս եղաւ էն շնորհալի գոյգր: Չմայլած կը դիտէինք գիրենք . պար մը չէր այս, այլ շլացուցիչ բան մը, եթերային ու ցնորական սլացում մը, յափշտակութիւն մը, քերթուած մը ամբողջ:

Միս պարողները իրենք ալ կանգ առեր էին այս գոյգին շուրջը հիացած, հիացում, որուն մէջ նախանձը իր արդար բաժինը ունէր:

Յանկարծ, սայթակումի պէս բան մը պատահեցաւ, կինը իր բոլոր ծանրութեամբ վայր իյնալու պէս եղաւ . երիտասարդը մեծ ճիգով հաջողեցաւ իր գիրկին մէջ բռնել գայն:

— Ոտքը սահեցաւ,- կ'ըսէին:

Ոչ, աւելի բան մըն էր, նուաղում մը ունեցեր էր:

— Հասն՛ք, Տօթթօռ,- պոռաց երիտասարդը:

Իսկոյն քովը վագեցի ու երկուքնիս բազմոցին վրայ տեղաւորեցինք զինքը . հագիւ կրցաւ աչքերը բանալ . անմիջապէս տեսայ սրտի կաթուածի բոլոր նշանները:

Ընդհանուր տակնուվրայութեան մէջ՝ դեղ մը ապսպրելն անգամ անկարելի կը դառնար . օտարականները հեռացուցինք. հիւրերը մէկիկ մէկիկ մեկնեցան . բայց դեռ սանդուխներուն վրայ անոնց ոտնաձայնը չմարած, անիկա իր հոգին աւանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մէջ, նոյնիսկ իր բոյնին մէջ նետահար սպաննուած թռչունի մը պէս, ժամանակ չձգելով, որ դեղ կամ դարման մը ընեն:

Այս եղաւ ահա իր վախճանը . կեանքին բոլոր երանութիւնները միացած խտացած էին այն երկվայրկեանին մէջ, ուր կեանքը կը թողուր . ասկէ աւելի երջանիկ մահ մը կրնա՞ք երեւակայել, պատրաստել, շինել ձեզի համար:

Հիւանդութիւններու, ցաւերու մէջ շտառապեցաւ .

Ծերութիւնը չփճացուց իր շնորհները . պաշտելի ու պաշտուած կինը մնաց մինչեւ վերջի վայրկեանին ու ընդհանուր գմայլումով մը ողջունուած, իր սիրած տղուն թեւին վրայէն գնաց հեռացաւ անիկա: Բաժակի մը պէս, որ կոչունքի մը սեղանի վրայ, ցնծութեան մաղթանքներու, բախումներու մէջ կը փշրուի, փոխանակ դուրսը սպասաւորներու ձեռքով, լուացքի աղտոտ ջուրին մէջ օր մը կոտրելու անհետանալու, այս կինն ալ էն շնորհագեղ պատկերի մը մէջ գերագոյն երջանկութիւնը զգացած ու պարգեւած ժամուն անհետացաւ:

Գ. ԶՕՀԲԱՊ

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](https://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](https://creativecommons.org/licenses/by-sa/3.0/)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](https://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Chaojoker

-
1. [↑ https://wikisource.org](https://wikisource.org)
 2. [↑ https://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](https://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0/)
 3. [↑ https://www.gnu.org/copyleft/fdl.html](https://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ https://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](https://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)